

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՎՎԵՆՏԻ ԲԱՐՄԵՂՅԱՆ (հղր-կին անգամ Անի-Երեբույք պատմահնագիտական միջազգային արգելոց կազմակերպելու հարցի շուրջ)։

Պատմարան, քանգարանագետ, հասարակական գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտի անօրեն, Ազգային անվտանգության հիմնախնդիրների միջազգային գիտությունների ակադեմիայի համակարգում գործող Հայաստանի ակադեմիայի նախագահ, Անիի պահպանության և ուսումնասիրության միջազգային գիտական կենտրոնի, ինչպես նաև Երկրաչափոց պատմության և մշակույթի հուշարձանները պահպանելու միջազգային կենտրոնի նախագահ, Հայաստանի պետական մրցականի դափնեկիր, Ֆրիտ-յոֆ Լանսենի անվան միջազգային ոսկե մեդալակիր։

Գիտական հետազոտությունների շրջանակն հիմնականում ընդգրկում է հայ ժողովրդի հնագույն շրջանի պատմության և մշակույթի հիմնախնդիրները, հայ ժողովրդի ծագման և կազմավորման, Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հարցերը։ Հեղինակն է խնդրա ստարկա հիմնախնդիրներին միքված շուրջ հարյուր գիտական հոդվածների և 10 մենագրությունների («Միջազգային հանգրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը» (1998), «Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է Հայոց ցեղասպանությունը» (1998), «Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրություն (1915-2000թթ.)» (2001), «Ամերիկայի միացյալ նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և քուրթական հակազդեցությունը» (2001), և այլ բազմաթիվ աշխատությունների)։ Ձեկուցումներով հանդես է եկել մի

շարք հանրապետական և միջազգային գիտաժողովներում, իր ակտիվ մասնակցությունը բերել ցեղասպանությանը միքված միջազգային քանալներին։

ՎԱՆԵՐԻ ԹՈՒՆՅԱՆ (*Պատմություն և Արտաքին քուրց: 1908-1909թթ.*)։

Պատմական գիտությունների դոկտոր, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պրոֆեսոր։

Գիտական հետազոտությունների շրջանակն ընդգրկում է հիմնականում 19-20-րդ դդ. սկզբին Հայաստանում և Ամերիկայում Ռուսաստանի քաղաքականության (տնտեսություն, եկեղեցի, փարպական կառավարում, Հայկական հարց) լինիքները։

Հեղինակն է «Հայաստանը և Ռուսաստանը 1878-1897թթ.» (Եր., 1997), «Ռուսաստանը և հայկական հարցը» (Եր., 1998), «Ղարաբաղի քախտումը» (Եր., 1999), «Հայկական հարցը ռուսական մամուլում 1900-1917թթ.» (Եր., 2000), «Հայոց եկեղեցու «Պոլսոեմիան»» (Եր., 2001) աշխատությունների, բազմաթիվ գիտական հրատարակումների։

ԲԵՆԻԱՄԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ (*Բրիտանական հարանպատ կազմակերպությունների օգնությունը հայ փախտականներին Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին*)։

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտի ասպիրանտ։

Գիտական հետազոտությունների շրջանակը՝ հայ ժողովրդի ռուրագույն պատմության հիմնահարցերը, մասնավորապես, Մեծ եղեռնի տարիներին Մեծ Բրիտանիայում ծավալված հայանպատ շարժման լուսարանումը։ Թեկնածուական առեմախտության քեման է «Հայանպատ շարժումը Մեծ Բրիտանիայում 1914-1923թթ.»։

Հեղինակ է «Հայաստան շաբաթանը Մեծ Բրիտանիայում ըստ վավերագրերի (1918-1923թթ.)» աշխատասիրության:

**ՎԱԿԳՄԻՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ** («Հայոց ցեղասպանության վերաբերյալ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (ՄՄԿ) համար կատարված իրավական վերլուծության մասին»):

ՀՀ Մանուսկրիպտային դատարանի աշխատակազմի իրավախորհրդատվական ծառայության գլխավոր մասնագետ, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանցարան-ինստիտուտի ասպիքանտ:

Գիտական հետազոտությունների շրջանակը՝ միջազգային իրավական պատասխանատվության հիմնահարցերը, մասնավորապես, Հայոց ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվությունը:

Թեկնածուական ստեղծագործության բեման է «Ցեղասպանության հանցագործության համար պետությունների միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը»:

Զեկուցումներով հանդես է եկել տարրեր հանրապետական և միջազգային գիտաժողովներին:

**ՏԻԳՐԱՆ ՄԱՌՈՍՅԱՆ** («Զարգացումը որպես ցեղասպանության անբարձեշտ հատկանիշ (հակահայկական և հակահրեական քարոզչության ընդհանրություններ)»):

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի ասպիքանտ:

Գիտական հետազոտությունների շրջանակն ընդգրկում է Հայոց մեծ եղեռնի և հրեական Հոլոքոստի պատմության խնդիրների ուսումնասիրումը: Թեկնածուական ստեղծագործությունն բեման է «Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի պատմաքննական համեմատությունը»:

**ՄԻՋԱՅԵԼ ՄԻՆԱՍՅԱՆ** («Հայկական հարցի սրածն Մտաթին հանաշխարհային պատերազմի նախօրյակին և Հայոց եկեղեցին 1877-1878թթ.»):

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի ասպիքանտ:

Ավարտել է Մուրաս-Ուսխայեյանի վարժարանը (Վենետիկ), ապա Տրիեստի համալսարանը՝ դիվանագիտության և միջազգային հարաբերություններ մասնագիտությամբ:

Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ դարասկզբի Հայկական հարցի և հայ եկեղեցու առնչումների հիմնահարցերը:

Թեկնածուական ստեղծագործության բեման է «Հայոց եկեղեցին և Հայկական հարցը Սուրբին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ընթացքում (1912-1918թթ.)»:

**ՎԱԿԱԳՆ ՏԱՏՐՅԱՆ** («Հայոց ցեղասպանության՝ բուլբուլի կողմից ժխտման գլխավոր տարրերը խնդրի աղավաղման և կեղծման ուսումնասիրությունը»):

Ամերիկահայ ցեղասպանագետ, սոցիոլոգիայի դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ:

Դասախոսել է ՄԱՆ, Եվրոպայի և Հարավային Ամերիկայի մի շարք համալսարաններում: Իր ակադեմիական րեզում գործունեությունը նվիրվել է հայկական ցեղասպանության պատմագիտական ուսումնասիրության հույժ կարևոր գործին:

Հեղինակ է տարրեր լեզուներով հրատարակված՝ Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին նվիրված բազմաթիվ հրատարակությունների, պատմագիտական, իրավաբանական խնդիրներին նվիրված ավելի քան 60 ակադեմիական հոդվածների:

Հանդես է եկել ցեղասպանության խնդիրներին նվիրված բազմաթիվ միջազգային գիտաժողովներին, քանակներին, հանդիպումներին:

**ԹԵՄԱ ՀՈՅՄԱՆ** («Մերձ գերմանացիները և Հայոց ցեղասպանությունը»):

Բեռլինի Ազատ համալսարանի Արևելյան Եվրոպայի ինստիտուտի գիտաշխատող, Հայոց ցեղասպանությանը նվիրված մի շարք հրատարակումների հեղինակ, միջազգային գիտաժողովների մասնակից:

1979-ից «Մարտնդիբի սույլ գտնվող ժողովուրդների պաշտպանության ընկերություն» միջազգային իրավապաշտպան կազմակերպու-

քյան նախագահության անդամ է:  
1985-ին Բեռլինում հիմնել է Հայաս-  
տանի լրտեսության և փաստագրու-  
թյան կենտրոնը:

Հեղինակ է նաև հայ ժողովրդի նոր  
և նորագույն պատմության տարբեր  
հարցերին նվիրված բազմաթիվ այլ  
ուսումնասիրությունների: